

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	6
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	6
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	7
1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	10
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	16
3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	17
IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	20
1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԶ	
2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ	25
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	25
4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	26
5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	26
6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	34
7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....	34
8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ.34	
9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	35
10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	35
11. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....	36

12. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	36
13. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ	37
V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ.....	38
VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ.....	38
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	38

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 179/Ա որոշում:

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ ֆինանսների նախարարություն:

**Հաշվեքննության
առարկան**

ՀՀ ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

**Հաշվեքննության
չափանիշները**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կասեցում**

2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշում:

**Հաշվեքննության
վերսկսում**

2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշում:

**Հաշվեքննություն
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ, ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 179-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները հատատաւովել են 1,695,009,852.1 հազ. դրամ գումարի չափով, որից՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 1,602,252,712.8 հազ.դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 35,324,420.2 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 57,432,719.1 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2018թ. (փաստ)		2019թ. (փաստ)		2020թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	1,341.69	100.0%	1,565.5	100.0%	1,695.0	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.12	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.24	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.33	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության 2019 թվականի 26 դեկտեմբերի N 1919-Ն որոշմամբ (Հավելված 2) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների հավաքագրման եռամսյակային բաշխումն՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի հաստատվել է հետևյալ համամասնությամբ.

(Աղյուսակ 2)
հազ.դրամ

Եկամտատեսակ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Պետական բյուջեի եկամուտներ	357,837,487. 8	808,147,342. 6	1,218,708,774. 8	1,695,195,470. 0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	340,093,394. 2	770,271,300. 7	1,160,072,837. 0	1,607,752,712. 8
Պաշտոնական դրամաշնորհներ	5,437,007. 9	12,563,487. 6	19,781,603. 8	35,510,038. 1
Այլ եկամուտներ	12,307,085. 7	25,312,554. 3	38,854,334. 0	51,932,719. 1

Համավարակի ազդեցության հետևանքով և այն մեղմելու անհրաժեշտությունից բխող հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու կարիքով և ռազմական դրության իրավական ռեժիմի կարգավորումներով պայմանավորված, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, Կառավարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կատարել է փոփոխություններ պետական բյուջեի եկամուտների տարեկան և իննամսյա ծրագրային ցուցանիշներում, որի արդյունքում պետական բյուջեի եկամուտների տարեկան և իննամսյա ճշտված ծրագրային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,600.7 մլրդ դրամ և 1,088.0 մլրդ դրամ:

2020 թվականի տարեկան և ինն ամիսների եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 3)
մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
Պետական բյուջեի եկամուտներ	1,695,009,852.1	1,600,747,310.8	1,218,708,774.8	1,087,977,317.3	1,075,122,698.0	67.2%	98.8%
այդ թվում՝							
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,602,252,712.8	1,450,338,723.8	1,160,072,837.0	1,010,758,848.0	1,016,761,435.0	70.1%	100.6%
Պաշտոնական դրամաշնորհներ	35,324,420.2	38,910,322.2	19,781,603.8	21,013,137.9	4,620,767.8	11.9%	22.0%
Այլ եկամուտներ	57,432,719.1	111,498,264.8	38,854,334.0	56,205,331.4	53,740,495.3	48.2%	95.6%

2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի փաստացի եկամուտները (1,075,122.7 մլն. դրամ) կազմել են 2020թ. ինն ամիսների ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (1,087,977.3 մլն.դրամ) 98.8%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (1,016,761.4 մլն. դրամ) կազմել են ինն ամիսների ճշտված ծրագրային ցուցանիշի (1,010,758.8 մլն. դրամ) 100.6 %-ը:

Պետական բյուջեի ինն ամիսների փաստացի եկամուտների 94.6%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.4%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 5.0%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2019 թվականի ինն ամիսների համեմատ 2020թ. ինն ամիսների պետական բյուջեի եկամուտները նվազել են 6.4%-ով կամ 73.0 մլրդ. դրամով:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջե փաստացի մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 1,016,761,435.0 հազ դրամ գումար՝ 100.6%-ով ապահովելով ՀՀ կառավարության ինն ամիսների ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը:

2020 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքն ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 33.0%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 335.1 մլրդ. դրամ, որից 199 մլրդ. դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 78.3 մլրդ. դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 136.2 մլրդ. դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:
- 30.5%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 310. 5 մլրդ. դրամ:
- 12.1%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 122. 6 մլրդ. դրամ:
- 8. 2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 83.6 մլրդ. դրամ:
- Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 44.2 մլրդ. դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 39.4 մլրդ. դրամ: Նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ակցիզային հարկի գծով եկամուտները աճել են 0.4%-ով՝ 1. 4 մլր դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակցիզային հարկի դրույքաչափերի աճով և նոր դրույքաչափերի հաստատմամբ:
- 4.6 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 46.9 մլրդ. դրամ:
- 1.9 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 19.8 մլրդ. դրամ:
- 1.7%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 17. 4 մլրդ. դրամ:

- 4.0%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 41 մլրդ դրամ:

- 1.7 %-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 17.6 մլրդ դրամ, մասնավորապես՝ 6.4 մլրդ դրամ կազմել են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 6.2 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 2.0 մլրդ. դրամ՝ ճանապարհային հարկը, 0.8 մլրդ. դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 0.6 մլրդ. դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 38.1 մլն դրամ՝ արտոնագրային հարկը:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 307.7 մլն դրամ:

- 2.2 %-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 22.6 մլրդ դրամ: Վճարված պետական տուրքերը կազմել են հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշի 64.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Բացի այդ, ցածր կատարողական է արձանագրվել նաև պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար սահմանված պետական տուրքերի գծով:

2019 թվականի ինն ամիսների համեմատ պետական տուրքի գծով բյուջեի մուտքերը նվազել են 24.6% ով կամ 7.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման, ինչպես նաև ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի նվազմամբ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճ է արձանագրվել լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով,

որոնք 29.2%-ով կամ 1.7 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների ու տրանսպորտի բնագավառներում լիցենզավորման համար գանձվող տուրքերը՝ կազմելով համապատասխանաբար 7.3 անգամ (820.5 մլն դրամով) և 7.3 անգամ (388.8 մլն դրամով):

ՀՀ ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2020թ. ինն ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)
մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-սեպտեմբեր	Հունվար-սեպտեմբեր	Աճի տեմպ %
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	60,108.2	56,043.0	93.2
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին	21,076.0	31,947.1	151.6

	մուտքագրված գումար			
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	587.5	174.9	29.8
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	5,450.9	9,330.0	171.2
5	ԸՆԴԱՄԵՆԸ	87,222.6	97,495.0	111.8

2020թ. ինն ամիսներում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 56,043.0 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից պակաս է 6.8 տոկոսով, իսկ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է 51.6 տոկոսով: ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 70.2 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 71.2 տոկոսով:

2020 թվականի ինն ամիսներում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 5)
հազ. դրամ

Բյուջե մուտքերը ըստ եկամտային հաշիվների.

Ժամանակահատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
2020թ. 9 ամիսների ընթացքում, այդ թվում՝	596,166,973	40,829,772	198,978,386	746,191,904
Հունվար	133,445,780	5,965,293	21,214,740	160,625,812
Փետրվար	67,231,843	4,352,398	21,001,219	92,585,460
Մարտ	102,800,953	5,332,003	22,879,590	131,012,542
Ապրիլ	140,523,351	4,339,032	17,688,570	162,550,953
Մայիս	70,019,017	3,436,667	16,784,319	90,240,003
Հունիս	82,146,003	3,211,495	23,819,610	109,177,108
Հուլիս	90,316,516	5,972,448	25,568,302	121,857,265
Օգոստոս	80,338,748	3,580,200	24,317,508	108,236,456
Սեպտեմբեր	109,917,072	4,640,237	25,704,528	140,261,837

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

(Աղյուսակ
5. 1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները.

հազ. դրամ

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ հարկատուներին	Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված	Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձների գումարը
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,100

Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ապրիլ	31,643	10,172,212	593,086	39,883	41,634	10,878,458
Մայիս	11,721	5,403,687	1,824,020	23,650	34,200	7,297,278
Հունիս	15,535	11,815,858	642,884	16,648	46,514	12,537,439
Հուլիս	28,880	11,124,959	932,559	4,766	305,523	12,396,688
Օգոստոս	12,754	7,924,001	2,285,150	1,006	252,782	10,475,693
Սեպտեմբեր	72,414	10,240,939	260,223	2,698	435,327	11,011,054
Ընդամենը	307,694	88,687,071	9,321,865	174,857	1,294,508	99,785,998

2020թ. 9 ամիսների արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 5. 2)

Ամիս	Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը
Հունվար	146,698,714
Փետրվար	85,303,981
Մարտ	117,031,733
Ապրիլ	151,672,496
Մայիս	82,942,724
Հունիս	96,639,670
Հուլիս	109,460,577
Օգոստոս	97,760,763
Սեպտեմբեր	129,250,783
Ընդամենը 2020թ. 9 ամիսներ	1,016,761,441

հազ. դրամ

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի ինն ամիսներում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 4. 6 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի 22 %-ը և տարեկան ճշտված պլանի 11. 9%-ը:

Մասնավորապես՝ ստացվել են հետևյալ պաշտոնական դրամաշնորհները.

1. Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագիր՝ Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումներ՝ 929. 5 մլն. դրամ,
2. Կովկասի բնության հիմնադրամի կողմից՝ «COVID-19 Արտակարգ դրամաշնորհի պայմանագրի» շրջանակներում՝ 267.2 մլն. դրամ,
3. Նպատակային դրամաշնորհներ՝ 3,424. 1 մլն. դրամ,
այդ թվում՝

Նպատակային դրամաշնորհներ	Գումար /մլն. դրամ/	Կատարման %-ը պլանի նկատմամբ
- Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկից	322.4	14.9%
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից	609. 4	15%
- Գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրված	733.9	93.3%
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկից (KfW)	602.3	37.6%
- ԱՄՆ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր	193.9	23.6%
- Համաշխարհային բանկից	402.6	30.6%
- ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր	324.8	103.2%
- Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ	234.8	71.1%
Ընդամենը	3,421. 1	16. 3%

Դրամաշնորհների կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 16. 3%-ը: Մասնավորապես, չեն ստացվել 5 ծրագրերով նախատեսված 3.4 մլրդ. դրամ դրամաշնորհները, իսկ 13 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 18 %-ով, որոնք կազմել են 3.1 մլրդ դրամ:

2020 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները 50.4%-ով կամ 4.7 մլրդ դրամով գիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2020 թվականի ինն ամիսներում կազմել են 53,740.5 մլն դրամ, որը 4,4%-ով կամ 2.464.8 մլն դրամով պակաս է կազմել հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշից, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների կատարողականով: 2020 թվականի ինն ամիսների այլ եկամուտները նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ պակաս են կազմել շուրջ 10%-ով կամ 5.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերի նվազմամբ: Միաժամանակ՝ աճել են բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների գծով եկամուտները:

Մասնավորապես այլ եկամուտներից՝

- 12.2 մլրդ դրամը ստացվել է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ 85.1%-ով ապահովելով իննամսյա ծրագրային ցուցանիշը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտները նվազել են 50.1%-ով կամ 12.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց ստացված մուտքերի նվազմամբ, ինչպես նաև պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի միջոցները պետական բյուջեում չներառելու հանգամանքով և մաքսային մարմինների կողմից մատուցվող մի շարք ծառայությունների համար նախկինում սահմանված մաքսավճարների փոխարեն պետական տուրքի սահմանմամբ:
- 13.1 մլրդ դրամը կազմել է հաշվետու ժամանակահատվածում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները՝ 123.7%-ով (7.3 մլրդ

դրամով) գերազանցելով ինն ամսվա ծրագրված մուտքերը և 51.7%-ով (4.5 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 133 ավանդային պայմանագիր՝ 1,045 մլրդ դրամ ընդհանուր գումարով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կնքվել էր 95 ավանդային պայմանագիր՝ 736 մլրդ դրամ ընդհանուր գումարով): Հաշվետու ժամանակահատվածում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է 8,101 մլն դրամ, որը մոտ 0.4 մլրդ դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համանուն ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է 2020 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի եկամուտների համեմատ ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով, որի պայմաններում առաջացել են լրացուցիչ ժամանակավոր ազատ դրամական միջոցներ, ինչպես նաև ֆինանսական կարիքի ապահովման նպատակով պետական գանձապետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներով, որոնց տեղաբաշխումից մուտքագրված միջոցները ևս ներդրվել են՝ ապահովելով լրացուցիչ եկամուտ: Վերոհիշյալ հանգամանքներով, ինչպես նաև 2019 թվականի ինն ամիսների համեմատ 2020 թվականի նույն ժամանակահատվածում 149 մլրդ դրամով ավելի շատ ավանդների փոխանցմամբ է պայմանավորված նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զուտ տոկոսագումարների աճը:

- 10.8 մլրդ դրամը կազմել է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում ստացված տոկոսավճարները, որոնք 44.2%-ով (3.3 մլրդ դրամով) գերազանցելով ինն ամիսների համար ծրագրված մուտքերը և 60.1%-ով (4.1 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես՝ 10.7 մլրդ դրամ են կազմել ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները, 87 մլն դրամ՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները, որոնք կազմել են իննամսյա ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 144.7%-ը և 100%-ը: Նախորդ տարվա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը նույնպես պայմանավորված է ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների աճով, որը կազմել է 61.3%:
- 8.5 մլրդ դրամը կազմել է 2020 թվականի ինն ամիսների ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 87.5%-ով ապահովելով առաջին կիսամյակի

ծրագրված մուտքերը և 19.7%-ով կամ 2.1 մլրդ դրամով պակաս կազմելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված ՀՀ ոստիկանության, ՀՀ վարչապետի աշխատակազմի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում գանձված գումարների նվազմամբ:

- 3,480.7 մլն դրամը կազմել են իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացված շահութաբաժինները՝ 338%-ով գերազանցելով ինն ամսվա ծրագրված մուտքերը և 2.4 անգամ (2.024 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը պայմանավորված է հիմնականում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՀՀ ՏԿԵՆ) քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համակարգի «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կողմից տարեկան կտրվածքով 315.6 մլն դրամ ծրագրավորված (կանխատեսված) ցուցանիշի դիմաց 1,987.6 մլն դրամ (որից՝ 1,202.0 մլն դրամը լրացուցիչ) շահութաբաժնի վճարմամբ:

1.6 մլրդ դրամը կազմել են այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտները՝ 6.2%-ով գերազանցելով ինն ամիսների ծրագիրը և 4.8 անգամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մուտքերը: Ստացված միջոցներից ավելի քան 1.1 մլրդ դրամը կազմել է ՀՀ կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման համար ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից պետությանը ֆինանսական աջակցության նպատակով բացված գանձապետական հաշվի մուտքը:

IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով ֆինանսների նախարարության կողմից իրականացվող ծախսերի տարեկան ճշտված պլանը սահմանվել է 227,134,844.87 հազ.դրամ: 2020 թվականի ինն ամիսների ճշտված պլանը՝ 165,678,410.87 հազ.դրամ:

Ֆինանսների նախարարության կողմից իրականացված ծախսը կազմել է 161,257,188.80 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 97%:

ՀՀ Ֆինանսների նախարարության 2020 թվականի ինն ամիսների բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի (միջոցառումների) հետևյալն է.

Աղյուսակ 7
Հազ. դրամ

Ծրագրի կոդը	Միջոցառում, հոդված	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Կատարման %-ը
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		227,134,561.17	165,678,443.37	161,257,188.8	97
1006	Արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր	32.50	32.50	0.00	0
1006	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում	30,683.8	20,083.80	17,801.67	89
1006	Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման ու պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ	37,167.90	30,060.60	29,383.55	98
1006	Կառավարության պարտքի սպասարկում	166,723,209.15	120,541,330.70	117,679,815.34	98

	- Ներքին տոկոսավճարներ	86,995,848.90	55,065,340.0	54,606,183.46	99
	- Արտաքին տոկոսավճարներ	79,727,360.25	65,475,990.70	63,073,631.88	96
1006	Մուրհակների սպասարկում	93,322.30	68,497.50	68,445.19	100
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	35,136.00	25,830.00	15,730.85	61
1018	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետության անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	39,830.20	29,700.00	0.00	0
1018	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետության անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում	1,820,363.10	1,365,272.40	0.00	0
1031	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	29,518.00	20,626.00	0.00	0
1093	Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերում	34,000.00	25,500.00	17,190.00	67
1108	Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ	2,428,148.30	1,649,276.70	1,555,112.84	94
1108	Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ	243,512.50	158,371.30	143,950.34	91
1108	ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում	82,316.70	82,316.70	81,973.10	100
1080	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	20,205.85	20,205.85	20,205.85	100
1185	Արտասահմանյան պաշտոնական	729.87	729.87	729.87	100

	գործուղումներ				
1108	ՀՀ ֆինանսների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում	5,849.20	5,849.20	0.00	0
1137	Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում	19,700.00	14,775.00	13,050.00	88
1137	Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում	107,355.00	82,366.00	76,180.90	92
1136	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	0.00	0.00	0.00	-
1206	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում	0.00	0.00	0.00	-
1136	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում (Արդյունաբերական չափագիտության լաբորատորիաների սարքավորումներ)	0.00	0.00	0.00	-
1205	ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում	4,945.80	3,709.40	3,709.40	100
1212	Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում	55,378,535.00	41,533,909.90	41,533,909.90	100

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 15-րդ էջում՝ առաջին պարբերությունում և աղյուսակ 7-ի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում, տարեկան ճշտված պլանի և հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի ցուցանիշները՝ 227,134,844.87-ի և 165,678,410.87-ի փոխարեն, պետք է լինեն համապատասխանաբար 227,134,561.17 և 165,678,443.37:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի նկատառումները հաշվի են առնվել:

1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,495,967.9 հազ.դրամ գումար, 2020թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 2,428,148.30 հազ.դրամ, ինն ամիսների ճշտված պլանը՝ 1,649,276.70 հազ.դրամ, դրամարկղի ծախսը՝ 1,555,112.84 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 94,163.86 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 94%:

Նշված միջոցառման շրջանակներում ծախսերն ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 8)
հազ.դրամ

Միջոցառում (հոդված)	Ֆինանսավորում	Դրամարկղի ծախսը	Փաստացի ծախս
1	2	3	4
Ընդամենը	1,596,030.70	1,555,112.84	1,663,661.06
Աշխատանքի վարձատրություն	1,535,816.90	1,495,294.34	1,601,169.68
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում և այլ ծախսեր և պարտադիր վճարներ	60,213.80	59,818.50	62,491.38

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է **1,601,169.68 հազ. դրամ**, դրամարկղի ծախսը՝ **1,495,294.34 հազ. դրամ**:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ֆինանսավորումը կազմել է 60,213.8 հազ.դրամ, դրամարկղի ծախսը՝ 59,818.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 62,491.38 հազ.դրամ:

Միջոցառման մասով հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է սեպտեմբեր ամսվա որոշ ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումները հոկտեմբեր ամսին կատարելու հանգամանքով:

2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՎՈՂԾԱԽՍԵՐ

«Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 32.5 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. ինն ամսվա պլանը կազմել է 32.5 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում սույն միջոցառման գծով վճարվել է “Bloomberg Finance L.P.” կազմակերպության կայքում իրավաբանական անձի նույնականիշի թարմացման դիմաց վճարումը, որն համաձայն հիշյալ ծառայության դիմաց 2020 թվականին գործող գնացուցակի կազմել է 50 ԱՄՆ դոլար: Հաշվի առնելով, որ այդ վճարումը հնարավոր էր իրականացնել բացառապես բանկային քարտի միջոցով և ՀՀ ֆինանսների նախարարությունում նման տեսակի վճարումների համար բանկային քարտի բացակայությունը, ծառայության դիմաց պահանջված գումարը փաստացի վճարվել է ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության պետի անձնական բանկային քարտից:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 30,683.8 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 20,083.8 հազ.դրամ: Սույն միջոցառումով՝ պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և գանձապետական պահառուի համակարգի վերաբերյալ հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների հեռարձակման, ՀՀ պետական պարտքի տարեկան

հաշվետվության և պետական բյուջեի կատարման հաշվետվությունների հրապարակման գծով, հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 17,801.67 հազ.դրամ: Իննամսյա պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 2,282.13 հազ.դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացով, մասնավորապես՝ համապատասխան պայմանագրերի՝ մարտի սկզբից ուժի մեջ մտնելու հանգամանքով:

4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 37,167.9 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 30,060. 6 հազ.դրամ: Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման ու պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման համար, հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 29,383.55 հազ.դրամ: Ինն ամիսների պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 677.05 հազ.դրամ, ինչը պայմանավորված է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ:

5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«ՀՀ Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեի ճշտված պլանով նախատեսվել է 166,723,209.15 հազ.դրամ, 2020թ. ինն ամսվա ճշտված պլանը կազմել է 120,541,330,70 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 117,679,815.34 հազ. դրամ, տարբերությունը՝ 2,861,515.36 հազ.դրամ:

Կառավարության պարտքի սպասարկման միջոցառման 2020թ. ինն ամիսների կատարողականը հետևյալն է՝

(Աղյուսակ 9)
հազ. դրամ

Միջոցառում (հոդված)	2020թ. ինն ամիսների ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Կատարման %-ը $6=4/2 \times 100\%$
1	2	3	4	5	6
Ընդամենը	120,541,330.70	117,679,815.79	117,679,815.34	117,679,815.3	97.6
Ներքին տոկոսավճարներ	55,065,340.00	54,606,183.46	54,606,183.46	54,606,183.5	99.2
Արտաքին տոկոսավճարներ	65,475,990.70	63,073,632.33	63,073,631.88	63,073,631.9	96.3

Կառավարության պարտքի սպասարկմանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 117.7 մլրդ դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 97.6%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 54.6 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 63.1 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են իննամսյա ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 99.2%-ը և 96.3%-ը:

Արտաքին վարկերի սպասարկման գծով արձանագրված ցուցանիշների շեղումները ծրագրայինից հիմնականում պայմանավորված են գերմանական KfW-ի մի շարք վարկերի գծով մասհանումների ժամկետի երկարաձգման հետևանքով հատուցման վճարի (4.18 մլն Եվրո կամ 2.22 մլրդ դրամ) վճարման հետաձգմամբ (պայմանավորված այդ վարկային համաձայնագրերում փոփոխություններն ուժի մեջ մտցնելու գործընթացով), ինչպես նաև 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային և վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերությամբ, 2019 թվականի և 2020 թվականի ինն ամիսների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշների էական թերակատարմամբ:

Չնայած նրան, որ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ պարտքի ծավալն աճել է 15.5%-ով, պարտքի սպասարկման ծախսերը գրեթե մնացել են անփոփոխ:

Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի և դրա հիմնական բաղադրիչների կառուցվածքի փոփոխությամբ (մասնավորապես արտարժույթային

պարտատոմսերի կառուցվածքի փոփոխությամբ), ինչպես կառավարության ընդհանուր պարտքի, այնպես էլ դրա հիմնական բաղադրիչների միջին կշռված անվանական տոկոսադրույքի նվազմամբ և արտարժույթային վճարումների փոխարկումների համար կիրառվող ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխությամբ (2019թ.՝ 486.55, իսկ 2020թ.՝ 476.46):

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել ներքին տոկոսավճարների գծով՝ 19%-ով կամ 8.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի և դրա կառուցվածքում երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժնի աճով:

Արտաքին տոկոսավճարները նույն ժամանակահատվածում նվազել են 12.2%-ով կամ 8.8 մլրդ դրամով՝ պայմանավորված արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի նվազմամբ (պայմանավորված 2019 թվականի սեպտեմբերին կատարված գործառնություններով), ինչպես նաև արտարժույթային վճարումների փոխարկումների համար կիրառվող ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխությամբ:

2020թ. ինն ամսվա ՀՀ պետական պարտքի կառուցվածքը և 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համադրելի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 10)

ՀՀ պետական պարտքի կառուցվածքը	31.12.2019 մին ԱՄՆ դոլար	31.12.2019 մլրդ դրամ	30.09.2020 մին ԱՄՆ դոլար	30.09.2020 մլրդ դրամ	
				մլրդ դրամ	%
ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,854.6	3,830.1	109.1
որից՝					
ՀՀ կառավարության պարտք	6,831.9	3,277.3	7,374.5	3,595.9	109.7
այդ թվում՝					
արտաքին պարտք	5,295.2	2,540.1	5,496.7	2,680.3	105.5
այդ թվում՝					
արտաքին վարկեր և փոխառություններ	4,306.7	2,065.9	4,571.0	2,228.9	107.9
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	7.0	3.3	6.8	3.3	98.5
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր	973.7	467.1	910.7	444.1	95.1

արտաքին երաշխիքներ	7.8	3.8	8.2	4.0	106.1
ներքին պարտք	1,536.7	737.2	1,877.8	915.7	124.2
այդ թվում՝					
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-	
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	1,412.8	677.7	1,788.5	872.1	128.7
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր	124.0	59.5	89.3	43.5	73.2
ներքին երաշխիքներ	-	-	-	-	
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	489.3	234.7	480.1	234.1	99.7
որից					
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	129.0	61.9	123.3	60.1	97.2
ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,854.6	3,830.1	109.1
այդ թվում՝					
ՀՀ արտաքին պետական պարտք	5,784.5	2,774.8	5,976.8	2,914.4	105.0
ՀՀ ներքին պետական պարտք	1,536.7	737.2	1,877.8	915.7	124.2

ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,854.6	3,830.1	109.1
որից՝					
ՀՀ դրամով ներգրավված պարտք	1,419.7	681.0	1,795.3	875.4	128.5
արտարժույթով ներգրավված պարտք	5,901.5	2,831.0	6,059.3	2,954.6	104.4

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,830.1 մլրդ. դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 9.1%-ով կամ 318.0 մլրդ դրամով: ՀՀ պետական պարտքի 76.1%-ը բաժին է ընկնում ՀՀ արտաքին պետական պարտքին, իսկ 23.9%-ը՝ ՀՀ ներքին պետական պարտքին: Միաժամանակ՝ ՀՀ պետական պարտքի 77.1%-ը բաժին է ընկնում արտարժույթով ներգրավված պարտքերին, իսկ 22.9%-ը՝ ՀՀ դրամով ներգրավված պարտքերին:

ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,595.9 մլրդ. ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 9.7%-ով կամ 318.7 մլրդ դրամով:

ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 234.1 մլրդ. ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն նվազել է 0.3%-ով կամ 620.2 մլն դրամով:

ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,680.3 մլրդ ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 5.5%-ով կամ 140.2 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 915.7 մլն դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 178.5 մլրդ դրամով կամ 24.2%-ով:

2020թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի 74.5%-ը բաժին է ընկել կառավարության արտաքին պարտքին, իսկ 25.5 %-ը՝ ներքին պարտքին: Իսկ ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքում 83.2 %-ը կազմել են արտաքին վարկերը և փոխառությունները, իսկ 16.6%-ը՝ ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը: ՀՀ կառավարության ներքին պարտքի 95.2%-ը կազմել են ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը, իսկ 4.8%-ը՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը:

2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

(Աղյուսակ 11)

մլն ԱՄՆ դոլար

ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը	31.12.2019	30.09.2020
Ընդամենը	4,306.7	4,571.0
Կառուցվածքն ըստ վարկատուների, %	100.0	100.0
այդ թվում՝		
Միջազգային կազմակերպություններ	75.1	76.9

որից՝		
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD)	17.8	17.1
Զարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA)	23.5	21.6
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (EBRD)	0.4	0.5
Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)	2.7	2.8
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD)	1.5	1.4
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ (OFID)	1.3	1.1
Ասիական Զարգացման Բանկ (ADB)	17.9	16.8
Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	1.2	7.1
Եվրամիություն (EU)	1.7	1.7
Եվրասիական Զարգացման Բանկ (Կայունացման և Զարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ)	7.2	6.8
Օտարերկրյա պետություններ	24.4	22.6
որից՝		
Ռուսաստանի Դաշնություն (RF)	9.2	7.9
Գերմանիա (KfW)	5.9	5.9
Ֆրանսիա (France)	3.0	3.1
ԱՄՆ (USA)	0.4	0.3
Ճապոնիա (JICA)	5.2	4.9
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.1
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.5	0.5
Առևտրային բանկեր	0.5	0.5
որից՝		
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.1	0.1
Ռայֆայզեն Բանկ (Ավստրիա)	0.2	0.2
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.2	0.2

2020թ. ինն ամսում ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարները կազմել են 117.7 մլրդ. դրամ, ներքին տոկոսավճարները՝ 54.6 մլրդ. դրամ, արտաքին տոկոսավճարները՝ 63.1 մլրդ. դրամ:

2020թ. առաջին կիսամյակում ՀՀ կառավարության պարտքի գծով կատարվել են հետևյալ վճարումները.

(Աղյուսակ 12)
մլն. դրամ

2020թ.	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Ընդամենը
Ընդամենը տոկոսավճարներ	3,046.5	8,576.4	26,173.3	30,031.4	8,216.4	3,759.3	3,245.1	8,746.7	25,884.7	117,679.8
ներքին տոկոսավճարներ, այդ թվում՝	203.3	4,764.2	8,936.1	26,680.2	124.5	379.6	59.7	4,617.7	8,840.9	54,606.2
պետական գանձապետական պարտադրույթների գծով	203.3	4,764.2	8,936.1	26,680.2	124.5	379.6	59.7	4,617.7	8,840.9	54,606.2
արտաքին տոկոսավճարներ, այդ թվում՝	2,843.3	3,812.2	17,237.2	3,351.2	8,091.9	3,379.7	3,185.4	4,129.0	17,043.7	63,073.6
արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով	2,843.3	3,812.2	2,619.6	3,351.2	8,091.9	3,379.7	3,185.4	4,129.0	2,426.1	33,838.3
արտարժույթով պետական պարտատոմսերի գծով	-	-	14,617.7	-	-	-	-	-	14,617.7	29,235.3

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 24-րդ էջում էջում ներկայացված աղյուսակի 4-րդ սյան 5-րդ տողում ՀՀ պետական պարտքի ցուցանիշը՝ 7,854.67-ի փոխարեն, պետք է լինի 7,854.6:

Արձանագրության 26-րդ էջում ներկայացված աղյուսակի 2-րդ սյան 1-ին տողում (Եվրասիական Ջարգացման Բանկ (Կայունացման և Ջարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ)) ցուցանիշը՝ 7.1-ի փոխարեն, պետք է լինի 7.2, 3-րդ սյան 6-րդ տողում (Ֆրանսիա (France))՝ 3.0-ի փոխարեն 3.1, 2-րդ սյան 8-րդ տողում (Ճապոնիա (JICA))՝ 5.3-ի փոխարեն 5.2:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննության օբյեկտի նկատառումները հաշվի են առնվել:

6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Մուրհակների սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 93,232.0 հազ.դրամ գումար, 2020թ. իննամսյա պլանը կազմել է 68,497.50 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 68,445.19 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 52.31 հազ.դրամ:

Թերակատարումը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, կապված է մարման ենթակա մուրհակների մուրհակատերերի կողմից թվով 3 մուրհակների վճարման հայտերի չներկայացմամբ:

7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«Պետական հիմնարկների եվ կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 35,136. 0 հազ.դրամ գումար, 2020թ. 9 ամիսների ճշտված պլանով թվով 517 աշխատակցի հաշվարկով պլանավորվել է 25,830. 0 հազ.դրամ: Դրամարկղի ծախսը կազմել է 15,730.85 հազ. դրամ՝ սոցիալական փաթեթներով ապահովվել է թվով 327 աշխատակից, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 10,099.15 հազ. դրամ, ինչը պայմանավարված է հաշվետու ժամանակաշրջանում չհամալրված 190 միավոր հաստիքների հանգամանքով:

8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվող Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական

ծառայությունների ձեռքբերում միջոցառման մասով 2020թ. 9 ամիսների ընթացքում ծախսեր չեն կատարվել և ծրագրով նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

Մասնավորապես՝ Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրման նպատակով նախատեսված 1,365,272.4 հազ դրամ միջոցները չեն օգտագործվել: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական համակարգերի ներդրման կազմակերպման համար անհրաժեշտ խորհրդատուի ներգրավման գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի կազմման գործընթացը դեռևս ավարտված չէ:

Նույն հանգամանքով պայմանավորված՝ չի օգտագործվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով նախատեսված 29.7 մլն դրամը:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրով 2020թ. 9 ամիսների ընթացքում նախատեսված 20,626.00 հազ դրամ միջոցներից կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ծախսեր չեն իրականացվել: Կնքված պայմանագրի շրջանակներում ծառայությունները նախատեսվել է իրականացնել 4-րդ եռամսյակում:

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 243,512.50 հազ.դրամ գումար, 2020թ. 9 ամիսների պլանը կազմել է

158,371.30 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկդի ծախսը՝ 143,950.34 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկդի ծախսի տարբերությունը կազմել է 14,420.96 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցած ծառայություններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ սեպտեմբեր ամսվա մատուցած ծառայության դիմաց վճարումները կատարվել են հոկտեմբեր ամսին:

11. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

«ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում» միջոցառման շրջանակներում նախատեսվել է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով համագործակցություն վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ: Ծառայությունները մատուցվել են Fitch և Moodys վարկանշային ընկերությունների կողմից:

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեի պլանով նախատեսվել է 80,816.70 հազ.դրամ գումար, ճշտված պլանով՝ 82,316.70 հազ.դրամ: 2020թ. 9 ամիսների պլանը կազմել է 80,816.70 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 82,316.70, դրամարկդի ծախսը՝ 81,973.10 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկդի ծախսի տարբերությունը կազմել է 343.60 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է տարադրամի փոխարժեքի փոփոխությունով:

12. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեի ճշտված պլանով նախատեսվել է 107,355.00 հազ.դրամ գումար, 2020թ. 9 ամիսների պլանը կազմել է 84,966.00 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 82,366.00, իսկ դրամարկղի ծախսը՝ 76,180.90 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 6,185.10 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է նրանով, որ Armeps և PPCM գնումների համակարգերի սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի շրջանակներում սեպտեմբեր ամսին մատուցված ծառայության դիմաց վճարումները կատարվել են հոկտեմբեր ամսին:

13. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

«Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով թվով 502 համայնքների համար նախատեսվել է 55,378,535.0 հազ.դրամ գումար, 2020թ. 9 ամիսների պլանը կազմել է 41,533,909.90 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 41,533,909.90 հազ.դրամ

V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: